

- *Տնտեսական ակտիվության աճի տեմպը սեպտեմբերին ավելացավ՝ հասնելով 7 տոկոսի (տ/տ):*
- *Գործազրկության ծավալներն ավելացան՝ 2023 թ. 2-րդ եռամսյակի 11.7 տոկոսից 2024 թ. 2-րդ եռամսյակում հասնելով 13.8 տոկոսի:*
- *Գնաճը հոկտեմբերին մնաց կայուն՝ 0.6 տոկոս (տ/տ):*
- *Ոսկու և թանկարժեք զարդերի վերաարտահանումը շարունակեց մնալ արտահանման աճը պայմանավորող հիմնական ոլորտը. արտահանման մյուս ոլորտներում սեպտեմբերին պատկերն անփոփոխ էր (տ/տ):*
- *Վարկերի աճի տեմպը շարունակեց գերազանցել ավանդների աճի տեմպը:*
- *Սեպտեմբերին գրանցվեց բյուջեի 11.6 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ:*

Սեպտեմբերին տնտեսական աճը հասավ 7 տոկոսի (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ աճելով օգոստոսի 5.6 տոկոսից (տ/տ) (գծապատկեր 1): Երկնիշ աճը շարունակվեց շինարարության (14.7 տոկոս, տ/տ), առևտրի (13.4 տոկոս, տ/տ), և ծառայությունների՝ առանց առևտրի (11.6 տոկոս, տ/տ) ոլորտներում: Սեպտեմբերին արդյունաբերական աճի տեմպը կրկնապատկվեց՝ հասնելով 4.6 տոկոսի (տ/տ)՝ օգոստոսի 2.1 տոկոսի (տ/տ) համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված էր թեթև արդյունաբերության (6.5 տոկոս, տ/տ), էլեկտրականության և էներգիայի (9.4 տոկոս, տ/տ) և ջրամատակարարման ու ջրահեռացման (7.1 տոկոս, տ/տ) ոլորտներում գրանցված աճով: Հանքարդյունաբերությունը կրճատվեց 5.6 տոկոսով (տ/տ), ինչպես օգոստոսին էր: Հանրագումարում՝ հունվարից մինչև սեպտեմբեր տնտեսական ակտիվության ինդեքսն աճեց 8.7 տոկոսով (տ/տ):

Գործազրկության մակարդակն աճեց՝ 2023 թ. 2-րդ եռամսյակի 11.7 տոկոսից հասնելով 13.8 տոկոսի՝ 2024 թ. 2-րդ եռամսյակում, ինչը հիմնականում պայմանավորված էր տոկոսարդյունից շրջանում գործազրկության աճով: Ընդհանուր գործազրկության աճը մեծապես վերագրվում է փախստականների ներհոսքին, որոնք դեռևս պետք է ինտեգրվեն աշխատաշուկայում: Քաղաքային գործազրկության մակարդակի աճը գերազանցեց գյուղական գործազրկության մակարդակի աճը: Բացի այդ, 2022-ից 2023 թվականների ընթացքում

տնտեսապես ակտիվ բնակչությունն ավելացավ 2.3 տոկոս:

Ոչ առևտրային գույտ դրամական փոխանցումները սեպտեմբերին կրճատվեցին 1 տոկոսով (տ/տ) և 1.1 տոկոսով (ա/ա՝ տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ): Սա տեղի է ունեցել օգոստոսի 18.6 տոկոս (տ/տ) կրճատումից և 10.7 տոկոս (ա/ա) ավելացումից հետո: Ռուսաստանից ներհոսքերը սեպտեմբերին կրճատվեցին 19 տոկոսով (տ/տ): Միացյալ Նահանգներից գույտ ներհոսքերն ավելացան 7.7 տոկոսով (տ/տ) (գծապատկեր 2):

Հոկտեմբերին գնաճը մնաց կայուն՝ 0.6 տոկոս մակարդակում (տ/տ) (գծապատկեր 3): Մանրամասնորեն և ոչ ալկոհոլային խմիչքների գները (0.5 տոկոս, տ/տ) և հագուստեղենի ու կոշիկեղենի գներն ընկան (3.4 տոկոս, տ/տ), իսկ տրանսպորտի գները բարձրացան 6.8 տոկոսով (տ/տ): Բնակարանների վարձակալության գների համաթիվը սեպտեմբերին աճեց 2.7 տոկոսով (տ/տ), սակայն ազդեցություն չունեցավ ընդհանուր գնաճի վրա: Կադաստրային տվյալները վկայում են, որ Երևանի կենտրոնում բնակարանների գները սեպտեմբերին բարձրացան 5.6 տոկոսով (տ/տ), իսկ վարձակալվող բնակարանների թիվն ավելացավ 60.3 տոկոսով (տ/տ): Հնարավոր է, որ այս մեծ աճին նպաստել է հիփոթեքային վարկերի տոկոսադրույքի վերադարձի մասով նոր սահմանափակումը, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարին: 2024 հունվարից հոկտեմբեր ամիսներին միջին գնաճը պահպանվել է հաստատուն՝ 0 տոկոս:

Սեպտեմբերին արտահանման ծավալներն ավելացան 39 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների վերաարտահանմամբ: Առանց դրա՝ արտահանումը գրեթե չէր ավելանա (գծապատկեր 4). արտահանման այս կատեգորիայում աճի տեմպը մայիսից նվազել է՝ հաջորդելով տարվա առաջին չորս ամիսներին գրանցված լուրջ աճին: Սեպտեմբերին ներմուծման ծավալներն ավելացան ընդամենը 12 տոկոսով, քանի որ վերաարտահանման տեմպը նվազեց: 2024 թվականի առաջին ինն ամիսների հանրագումարով՝ արտահանումը կրկնապատկվել է, իսկ ներմուծումն ավելացել է 54 տոկոսով, միաժամանակ առևտրի հաշվեկշռի պակասուրդը նվազել է 24 տոկոսով (տ/տ):

Հոկտեմբերին ՀՀ դրամն կայուն էր ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ միաժամանակ շարունակելով արժևորվել ռուբլու նկատմամբ (ա/ա): Մինչև հոկտեմբերի վերջ ՀՀ դրամը 3.8 տոկոսով ուժեղ է եղել ԱՄՆ դոլարի, և 8.9 տոկոսով՝ ռուբլու նկատմամբ (տ/տ): Միջազգային պահուստները

համեստ աճ են գրանցել (24.8 միլիոն ԱՄՆ դոլար)՝ ներմուծման ծածկույթը հասցնելով 2.5 ամսվա:


Սեպտեմբերին առևտրային բանկերի ավանդներն ու վարկերը ավելացան, համապատասխանաբար, 0.9 տոկոսով (ա/ա) և 2.2 տոկոսով (ա/ա), ինչը հիմնականում պայմանավորված էր ՀՀ դրամով արտահայտված ֆոնդերով: 2023 թվականի համեմատ փոխարժեքով ճշգրտված ավանդներն ավելացան 11.1 տոկոսով (տ/տ), իսկ վարկերն ավելացան 21.3 տոկոսով (տ/տ) (գծապատկեր 5): Արդյունքում՝ վարկ-ավանդ հարաբերակցությունն աճեց՝ 2023 թ. սեպտեմբերի 0.9 տոկոսից 2024 թ. սեպտեմբերին հասնելով 1 տոկոսի: Ֆինանսական ցուցանիշները մնացին կայուն, իսկ կապիտալի համարժեքության գործակիցը մի փոքր՝ 0.1 տոկոսային կետով աճեց սեպտեմբերին՝ հասնելով 20.4-ի: Չաշխատող վարկերի գործակիցը մնաց ցածր՝ 1.2 տոկոսի մակարդակում, իսկ ակտիվների եկամտաբերությունը մնաց կայուն՝ 4.5 տոկոսի մակարդակում:

Սեպտեմբերին գրանցվել է բյուջեի 11.6 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ՝ հանրագումարային

պակասուրդը հասցնելով տարեկան կանխատեսված ՀՆԱ-ի 0.7 տոկոսի: Անվանական արտահայտությամբ՝ հարկային եկամուտները, ներառյալ՝ հիփոթեքային վարկի մասով եկամտային հարկը, սեպտեմբերին ավելացան 12.1 տոկոսով (տ/տ): Մա հիմնականում պայմանավորված էր եկամտային հարկի (մինչև 11.5 տոկոս, տ/տ), բնապահպանական հարկի (մինչև 39.6 տոկոս, տ/տ) և շահութահարկի (մինչև 14.2 տոկոս, տ/տ) հավաքագրման աճով: Սեպտեմբերին ընդհանուր ծախսերն ավելացան 10.6 տոկոսով (տ/տ), ինչը հիմնականում պայմանավորված էր պաշտպանական ոլորտի ծախսերի ավելացմամբ (44 տոկոս, տ/տ աճ) և փախստականներին տրվող աջակցությամբ (55 տոկոս տ/տ աճ): Ավելին, կապիտալ ծախսերն ավելացան 7.4 տոկոսով (տ/տ)՝ հաջորդելով օգոստոսին գրանցված 0.5 տոկոս անկմանը (տ/տ): Մա հանգեցրեց բյուջեի 73 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդի 2024 թ. հունվար-սեպտեմբերի ամիսներին՝ համեմատած 2023 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցված 74.6 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդին (գծապատկեր 6):

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության տեմպը սեպտեմբերին ավելացավ 7 տոկոսով (տ/տ)


(Հայաստանի տնտեսական ակտիվության ինդեքս, (միլիոն ԱՄՆ դոլար) փոփոխությունը տ/տ, %)



Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 3. Հոկտեմբերին գնաճը մնաց 0.6 տոկոսի մակարդակում, ինչպես սեպտեմբերին էր

(ՍԳՀ գնաճ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ


Գծապատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների նվազումը դանդաղեց մինչև մեկ տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Թանկարժեք քարերի արտահանումը շարունակեց թռիչքային աճել և պայմանավորել ողջ աճը՝ 2023 թ. սեպտեմբերին համեմատ


(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 5. Առևտրային բանկերում ավանդներն ու վարկերը շարունակեցին աճել երկնիչ ցուցանիշով


(տոկոս, տ/տ, փոխարժեքով ճշգրտված)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. 2024 թ. հունվարից սեպտեմբերը գրանցվեց բյուջեի 73 փոխարդ ՀՀ դրամ պակասորդ

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն